ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցի կապակցությամբ

Խոնարհվում եմ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առջև:

1915 թվականի ապրիլի 24-ին սեփական հայրենիքում հազարամյակներ ապրած, արարած, բարիք ստեղծած հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանությունը չունի վաղեմության ժամկետներ, չունի ներում և արդարացում:

Որքան էլ ոճրագործները փորձել են ոչնչացնել մեր մշակույթը, մեր տաղերը, ձեռագրերն ու հոգևոր արժեքները, միևնույն է, հաղթել մեզ չի հաջողվել: Մենք շարունակում ենք ապրել Կոմիտասի երգերով, շարունակում ենք սերունդներ կրթել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի ստեղծագործություններով…

Յուրաքանչյուր հայի սրտում ապրում է նախնիների երազանքը. կրկին վար ու ցանք անել Արարատի ստորոտին, դպրոց ու եկեղեցի կառուցել, ապրել, դհոլ-զուռնա հնչեցնել, որդիներ ծնել պապերի կորսված հայրենիքում:
Եվ որքան էլ պատժից խուսափելու համար ցեղասպանների իրավահաջորդը շարունակի կրել փաստերն ու իրադարձությունները խեղաթյուրելու հանցագործի դասական վարքագիծը, միևնույն է՝ չի հաջողվի հերքել պատմական ճշմարտությունը:

Քաղաքակիրթ աշխարհն այսօր հարգանքի տուրք է մատուցում Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակին և խստորեն դատապարտում մարդկության նկատմամբ երբևէ կազմակերպված ամենադաժան գործողությունը:

Հ.Գ. Լուսանկարը ԲՀ Ստարա Զագորա նահանգի նահանգապետ Գերգանա Միկովայի հետ 2019 թվականի նոյեմբերի 15-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր կատարած այցից: